ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Որևէ ժողովրդի կենցաղի ու մշակույթի մասին գրելու, ավյալ ժողովրդի ճշմարիտ պատկերը ներկայացնելու համար պետք է մոտենալ այդ ժողովրդին, սպրել նրա հետ նույն հարկի տակ, անձամբ ծանոթանալ նրա հիստուկացին, վարքուբարքին, սովորույթներին, ավանդություններին և կենցաղային պայմաններին, այլապես հեռվից-հեռու, օտարների ասածով, ուրիշներից լսածով տրվածը խաթարուն կլինի:

Սույն աշխատության աղբյուրն ինքը ժողովուրդն է:

Մնվել եմ ծովի մակերեսից ավելի քան 2000 մետր բարձր ընկած Երզնկայի Պալապանի լեռնապարի հայ ու քուրդ խառն բնակչությամբ Խնձորեկ գյուղում, Հալչոնց հայ գերդաստանում: Չնայած մեր գյուղը պաշարված էր քրդաբնակ գյուղերով, հայերը կարողացել էին պահել մայրենի լեզուն, մշակույթն ու ազգային ինքնագիտակցությունը: Մանկության խաղընկերներս հայ ու քուրդ երեխաներ են եղել, որոնց հետ շրջել եմ սար ու դաշտ՝ բերք ու բարիք հավաքելու: Քուրդ երեխաները սիրում էին խոսել հայերեն, իսկ հայ երեխաներս՝ քրդերեն: Միասին ուխտի ենք գնացել ս. Մինասի չեքեմներին, առանց ազգային և կրոնական խտրության, ապրել ենք եղբոր պես:

Դպրոցն ավարտելուց հետո անցել եմ Դերսիմի լեռնաշխարհը հայ ու քուրդ մանուկների կրթության ու դաստիարակության գործով զբաղվելու, ընդ որում քուրդ մանուկներին հայերեն աստերով քրդերեն լեզու եմ ուսուցանել:

Մինչև 1914 թ., 29 տարեկանս, ապրել, սնվել ու մեծացել եմ լեռնաբնակ հայերի ու քրդերի մեջ: Նրանց հետ քնել ու ուսումնասիրել եմ լեռնաշխարհի անառիկ կիրճերը, արհեստական քարայրները, ջրերի հոսանքը, կամուրջների տեղը և կառույցը, բերդերի, ամրոցների, վանքերի ու եկեղեցիների կանգուն կամ ավերակ կոթողները: Ծանոթացել եմ լեռնաշխարհի կուսական անտառներին, հարուստ բուսականությանը, կենդանական աշխարհին: Վերջապես, երկար տարիներ թափառել եմ գյուղից-գյուղ, աշիրեթից-աշիրեթ, մասնակցել աղջիկ փախցնելու, ուխտագնացության, հարսանիքի, թաղման, թլպատման, դատ ու դատաստանի և այլ արարողությունների: Եղել եմ որսորդ, աշիրեթի անդամ և կովող, մասնակցել եմ Երզնկայից Կարին շարժվող չորրորդ զորաբանակից զինամթերք բռնագրավելուն, թուրք բռնակալության զինվորական արշավանքների դեմ բնիկների մղած մարտերին: Տարիներ շարունակ ապրել և քնել եմ հայերի ու քրդերի հարկի տակ, ծանոթացել նրանց ընտանեկան կառույցին, սովորույթներին, ավանդություններին, օջախի պաշտամունքին, վրեժխնդրության, թշնամության և բարեկամության, հյուրասիրության, նիստ ու կացի անգիր օրենքներին, տարազին ու բարքերին: Մասնակցել եմ անասնապահության, թշնամության և բարեկամության, հյուրասիրության, նիստուկացի կալ կամնող, քաղվոր, խուրձ կապող, բարդ դիզող, ապա հերկող, ջրառուք անող և, վերջապես, լեռնաշխարհում ապրող հայերի ու քրդերի հետ ապրել եմ ուրախության և տխրության օրեր: